կանութեան մէկ երրորդ մասը վերցնել որպէս տուրք: Եւ սակայն իրականութեան մէջ դրանով էլ չէին սահմանափակւում. վերցնում էին՝ առհասարակ որչափ կարող էին:

Սարդարները նշանակւում էին անորոշ ժամանակով: Դրա համար էլ իրենց տրամադրութեան տակ եղած ժամանակը նրանք օգտագործում էին, այն նպատակով, որ որչափ կարող են՝ աւելի դանձեր ժողովեն: Սարդարները մեծ մասով բոլորովին անծանօթ էին լինում այն երկրամասերի ներքին-տնտեսական պայմաններին, ուր որ կառավարելու էին դալիս: Դրա համար էլ նրանք տեղին վրայ մարդիկ էին ջոկում, մեծ մասով զինուորականների շարքերից ու նրանց միջոցով տուրքեր կորզում ժողովուրդից: Այդպիսիներին նրանք խան կամ բէկ տիտղոսն էին տալիս: Սրանք էլ իրենց հերթին նշանակում էին հարկահաւաք, ստորադաս պաշտօնեաներ, որոնց սարբիար (վերակացու) անունն էին տալիս: Սրանք էին իսկապէս կատարում գործառնութիւնները: «Խանները եւ բէկերը ամօթ էին սեպում կարդալ-գրել իմանալը: Դա համարում էին կարիքաւոր մարդկանց գործ՝ մի կտոր հաց վաստակել կարենալու համար: Ուստի ոչ ոքի մտքով անգամ չէր անցնում հաշուական գրքեր պահել:

Այդ բոլոր իշխանաւորները իրար հետ մրցում էին՝ ժողովրդին կեղեքելու գործի մէջ, որովհետեւ նրանք, «բացառութեամբ սարդարի, կարճ ժամանակով էին միայն մընում ծառայութեան մէջ — հաղուադէպ անգամ աւելի, քան երկու-երեք տարի»:

Ցետոյ Հաքստհաուզէն քաղելով Աբովեանի կողմից նրան անձամբ հաղորդած «Պատանեկան Յիշողութիւններից», բառացիօրէն առաջ է բերում Քանաֆեռի իրականութիւնից (պարսկական տիրապետութեան օրով) մի քանի ուշագրաւ տեղեկութիւններ: Դրանք վերաբերում են սարքիարներին եւ նրանց ձեռքով հաւաքուող հարկերին ու տուրքերին: Այդ ամենին Աբովեան անձամբ է տեսել, ապրել ու նկարագրել իր «Վէրք»ում եւ այս տողերի մէջ:

Նկատի ունենալով նրանց տնտեսա-պատմական կարեւոր նշանակութիւնը՝ առաջ ենք բերում այդ հատուածը ամբողջութեամբ:

«Մեր գիւղում (Քանաֆեռում) ամէն տարի տեսնում էինք», ասում է Աբովեան, «սարքիարին, որ գալիս էր ամառը՝ հաւաքելու կառավարութեան բաժինը տարուայ հունձից: Այս պարզ եւ քիչ ժամանակ պահանջող գործի համար նա գիւղում սովորաբար մնում էր երեքից մինչեւ չորս ամիս: Գիւղացիք պարտաւոր էին նրան յատկացնել ամենալաւ բնակարանը, ինչպէս եւ ծառայել նրան, նրա սպասաւորներին ու ձիերին: Ամենալաւ կենսամթերքները՝ հաւ, ձու, կարագ եւայլն, չատ անգամ նաեւ գինի (ո՛չ բոլոր պարսիկները արհամարհում են գայն) պարտաւոր էին գիւղացիք տանել նրա տունը: Գիւղական ծառան (գղիրը) ամէն օր տնից-տուն էր գնում՝ այդ մթերքները մուրալու կամ շորթելու նպատակով: Ցաճախ նրան ընկերակցում էր նաեւ սարքիարի ծառաներից մէկը կամ միւսը, նրան գործի մղելու եւ կամ պատժելու համար, եթէ արագօրէն բան չհաւաքէր: Մտրակով էին նրան առաջ քշում եւ անթիւ ու չլսուած հայհոյանքներ թափում գլխին, որոնցմով բացի թաթարերէնից աշխարհի եւ ոչ մի ուրիշ լեզու պարծենալ կարող է: Եթէ, բան է, պահանջի ենթակայ տան տէրը հրաժարուէր ուղածը տալ, ու եթէ գնացողը ոյժ զգար մէջը, անասնական կատաղութեամբ եւ բռնութեամբ կը խուժէր տուն, ամէն ինչ կը կոտրտէր, մտրակով կը ծեծէր եւ բռնութեան կ'ենթարկէր ամէնքին անխտիր՝ ո՛ւմ որ տանը տեսնէր — առանց տարիքի եւ սեռի խտրութեան: Եւ դա դեռ ծառա՛ն էր, սպասաւորը: Երեւակայելի՛ է ուրեմն, թէ ի՞նչ կը լինէր տէրը ինքը: Երբ վերջինս տնից դուրս էր գալիս, ստիպուած էին խեղճ մարդիկ հետեւիլ նրան, որպէս նրա թիկնապահները: Ստիպուած էին շարունակ եւ ուշադիր նրա դէմքին նայիլ, ինչ է՝ չլինի՞ թէ նրան բարկութիւն, դժկամակութիւն պատճառեն: Գիւղացիները խումբ-խումբ կանգնած էին մնում իրենց տների կտուրների վրայ եւ կամ դռների առաջ նստած, սովորաբար մեծ քարերի վրայ (սեղան եւ աթոռ անծանօթ բաներ են Հայաստանում), եւ կամ ցորեն ծամելով նստած էին մնում այդիներում, դեռնի վրայ, խորհրդակցելու համար: Հենց որ տեսնում էին նրան մօտ գալիս, մէկը ձեռքով կամ գլխարկով նշան էր անում, ու ամէնքը ցրւում էին անմիջապէս: Մարդիկ ստիպուած էին խո-